Ք.Երևան 11.06.2025թ.

,,ՍԳԿԿ,, ԻԿԿ Կարգապահական հանձնաժողով

Գարիկ Յավրումյանի կողմից, հնարավոր վարքագծի վերաբերյալ կանոնների խախտման դեպքում, կարգապահական վարույթ հարուցելու համար լսումներ հրավիրելու մասին

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Հանձնաժողովը, մասնակցությամբ՝ հանձնաժողովի նախագահ՝ Արման Սարգսյանի, հանձնաժողովի անդամներ՝ Լուսինե Սարգսյանի և Հարություն Գևորգյանի, քննարկելով ըստ ,,ՇԵՆՈՆ ԿՈ,, ՍՊԸ-ի տնօրեն՝ Վարդան Արմենի Էլբակյանի բողոքի, /այսուհետ՝ դիմումատու/ Գարիկ Յավրումյանի /այսուհետ կառավարիչ/ նկատմամբ, ՀՀ արդարադատության նախարար՝ Ս.Գալյանին և ,,ՍԳԿԿ,, ԻԿԿ-ին ներկայացված դիմումի պարզեց, որ ներկայացված դիմումի առնչությամբ ,,Սնանկության մասին,, ՀՀ օրենքի 27.3 հոդվածի 1-ին մասի ,,3,,-րդ ենթակետի և նույն հոդվածի 3-րդ մասի 1-ին և 2-րդ մասերով սահմանված նորմերով, կառավարիչի նկատմամբ պետք է հարուցվի կարգապահական վարույթ: Կառավարիչի կողմից, վարքագծի վերաբերյալ կանոնների հնարավոր խախտումը պարզելու նպատակով, 14.04.2025թ., 28.03.2025թ. և 14.04.2025թ.-ին նշանակվել են կարգապահական հանձնաժողովի նիստեր:

Իսկ 14.04.2025թ.-ին նշանակված նիստին, ներկա էին հանձնաժողովի նախագահ՝ Արման Սարգսյանը, հանձնաժողովի անդամներ՝ Լուսինե Սարգսյանը, Հարություն Գևորգյանը և դիմումատուի ներկայացուցիչ փաստաբան՝ Ալբերտ Արզումանյանը: Ինչ վերաբերվում է կառավարիչին, ապա վերջինիս կողմից հանձնաժողովին է ներկայացվել բացատրություն, իսկ վերջինիս կողմից ներկայացված մեկ այլ գրությամբ, վերջինս խնդրել է գործը քննել իր բացակայությամբ:

Հանձնաժողովի նախագահ՝ Արման Սարգսյանը նիստի մասնակիցներին հայտնեց, որ ,,Սնանկության մասին,, ՀՀ օրենքի 27.3 հոդվածի և կարգապահական հանձնաժողովի գործունեության և սնանկության գործով կառավարչի նկատմամբ կարգապահական վարույթի իրականացման կարգի 4.2 կետի հիմքով նիստի անցկացման քվորումը ապահովված է և կարող են սկսել դիմումի քննարկումը:

Նախ Ա.Սարգսյանը առաջարկեց դիմումի քննարկման նպատակով սահմանել հետևյալ հերթականությունը, այն է՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ կառավարիչը խնդրել է գործը քննել իր բացակայությամբ և ներկա չէ նիստին, ինչպես նաև հիմք ընդունելով այն փաստը, որ նիստի բոլոր ներկաները ծանոթ են վարույթում առկա բոլոր փաստաթղթերին, ուստի առաջարկեց լսել դիմումատուին, այնուհետև հարցերի դեպքում դրանք ուղղել դիմումատուին, իսկ այնուհետև հանձնաժողովը անցնի կարծիքների արտահայտմանը և այդ կարծիքներից ելնելով, կայացնել որոշում կարգապահական տույժ կիրառելու կամ այն կարճելու վերաբերյալ: Հանձնաժողովի անդամների կողմից, նշված առաջարկը ընդունվեց միաձայն:

Դիմումատուի կողմից հանձնաժողովին ներկայացվեց դիմումը, որով դիմումատուն նշել է, որ ՀՀ սնանկության դատարանի 04.04.2016թ. թիվ ՍԴ3/0029/04/15 վճռով «Կոլչեդան» ՊՓԲԸ-ն ճանաչվել է սնանկ և նույն դատարանի 01.03.2023թ. որոշմամբ, պարտապանի սնանկության գործով կառավարիչ է նշանակվել Գարիկ Յավրումյանը:

Ըստ դիմումատուի կողմից ներկայացված դիմումի, պարտապանին պատկանող ՀՀ Սյունիքի մարզ, Աճանան համայնք Թեջադին թաղամաս 1/1 (լոտ 2) եւ ՀՀ Սյունիքի մարզ, Աճանան համայնք, Թեջադին թաղամաս 3/1 (լոտ 3) հասցեներում գտնվող անշարժ գույքերը դրվել են հրապարակային սակարկությամբ աճուրդով վաճառքի:Իսկ Լոտ 2-ի, այն է՝ ՀՀ Սյունիքի մարզ, Աճանան համայնք, Թեջադին թաղամաս 1/1 հասցեի տակ գտնվող գույքի

մեկնարկային գինը սահմանվել է 1.644.624 ՀՀ դրամ, իսկ Լոտ 3-ի, այն է՝ ՀՀ Սյունիքի մարզ, Աճանան համայնք, Թեջադին թաղամաս 3/1 հասցեի տակ գտնվող գույքի մեկնարկային գինը՝ 355.914 ՀՀ դրամ:

Վերը նշված գույքերը հրապարակային սակարկությունների միջոցով վաճառելու նպատակով, կառավարիչի կողմից 22.12.2024թ.-ին տրվել է համապատասխան հայտարարություն azdarar.am պաշտոնական հայտարարությունների կայքում, որով աճուրդը նշանակվել է 09.01.2025թ.-ին:

Աճուրդին մասնակցելու համար, 03.01.2025թ. «ՇԵՆՈՆ ԿՈ» ՍՊ ընկերությունը, 09.01.2025թ.-ին անցկացվելիք աճուրդին մասնակցելու նպատակով, 22.12.2024թ. հայտարարության մեջ նշված 2470804396380060 բանկային հաշվեհամարին փոխանցել է լոտ 2-ի եւ լոտ 3-ի նախավճարը եւ մասնակցության վճարը, իսկ 03.01.2025թ. աճուրդի մասնակցության հայտը ներկայացվել է ՀՀ սնանկության դատարան:

Այնուհետև, ըստ դիմումատուի հայտարարության, վերջինս զանգահարել է կառավարիչին, որը հայտնել է, որ 22.12.2024թ. հայտարարության մեջ նշված հաշվեհամարը սխալ է նշել և պետք է ներկայացնել հայտ հաջորդ կազմակերպվող կրկնաճուրդին:

Ըստ դիմումատուի կողմից իր դիմումում նշված կարծիքի, այդ ժամանակ արդեն հասկանալի էր, որ կառավարիչը դիտավորյալ էր սխալ հաշվեհամար նշել, պարզելու համար, արդյո՞ք տվյալ աճուրդին այլ մասնակիցներ եւս կան, թե՝ոչ:

Դիմումատուն նշել է, որ վերջինիս կողմից ուսումնասիրվել է azdarar.am պաշտոնական հայտարարությունների կայքը եւ պարզել է, որ նախորդ բոլոր հայտարարություններում նույնպես սխալ հաշվեհամարներ են նշված եղել, ընդ որում, 09.01.2025թ. կայանալիք աճուրդի համար մասնակցության հայտ ներկայացնող միակ մասնակիցը եղել է դիմումատու՝ «ՇԵՆՈՆ ԿՈ» ՍՊ ընկերությունը:

Այնուհետև, 16.01.2025թ. azdarar.am պաշտոնական հայտարարությունների կայքում տեղադրվել է «Կոլչեդան» ՊՓԲԸ-ի սեփականության իրավունքով պատկանող գույքի կրկնաճուրդի կազմակերպման եւ անցկացման մասին հայտարարություն, համաձայն որի՝ 2025թ. հունվարի 09-ին նշանակված «Կոլչեդան» ՊՓԲԸ սնանկության գործով պարտապանին սեփականության իրավունքով պատկանող գույքի հրապարակային սակարկությամբ աճուրդ վաճառքը չի կայացել, հայտերի բացակայության պատճառով, չնայած նրան, որ այդ աճուրդին դատարանին ներկայացված է եղել հայտ:Իսկ նշված հայտարարությամբ, կրկնաճուրդը նշանակված է եղել 05.02.2025թ. ժամը 11:00-ին, ք. Կապան, Հ.Ավետիսյանի 7/44 հասցեում:Միաժամանակ դիմումում նշված է այն հանգամանքը, որ 05.02.2025թ. կայանալիք աճուրդին կառավարչի կողմից հայտարարությունում նշվել է ճիշտ հաշվեհամար:Դիմումատուն իր դիմումով կարծիք է հայտնել, որ կառավարիչը հստակ գիտակցելով որ դիմումատու ընկերությունը հետաքրքրված է վերոնշյալ գույքերով եւ կրկին հայտ է ներկայացնելու աճուրդին մասնակցելու համար, չգիտես ինչպես հայտնվում են այլ մասնակիցներ, որոնք նախորդ կազմակերպված աճուրդներով հայտ չէին ներկայացրել:

Համաձայն ներկայացված դիմումի, դիմումատուն 12.02.2025թ. գրությամբ սնանկության գործով կառավարիչ Գարիկ Յավրումյանին խնդրել է տրամադրել 09.01.2025թ. աճուրդի արձանագրությունը, այդ աճուրդին վերաբերելի բոլոր փաստաթղթերը եւ ներկայացնել պարզաբանում, թե ինչու 09.01.2025թ. աճուրդին մասնակցած միակ մասնակիցը հաղթող չի ճանաչվել: Ի պատասխան նշված գրության Գարիկ Յավրումյանը հայտնել է, որ. «09.01.2025թ. ժամը 11:00-ին, ք. Կապան, Հ.Ավետիսյանի 7/44 հասցեում կայանալիք թիվ ՍԴ3/0029/04/15 սնանկության գործով պարտապան «Կոլչեդան» ՊՓԲԸ-ին պատկանող գույքի ԼՈՏ 2 եւ ԼՈՏ 3 աճուրդը չի կայացել հայտերի բացակայության պատճառով:Չնայած նրան, որ ըստ էության, դիմումատուի կողմից դատարանին է ներկայացվել հայտ:

Միաժամանակ պատասխան գրությամբ հայտնել է նաև, որ անդրադառնալով բողոքաբերի այն պնդմանը, որ աճուրդի անցկացման վայր է այցելել, աճուրդի օրը եւ աճուրդի ժամին, կառավարիչը հայտնել է ,որ չի համապատասխանում իրականանությանը:

Դիմումատուն ուսումնասիրելով թիվ ՍԴ3/0029/04/15 սնանկության գործով կառավարիչ Գարիկ Ցավրումյանի կողմից, azdarar.am պաշտոնական հայտարարությունների կայքում 29.10.2024թ.-ից հետո տեղադրված բոլոր հայտարարությունները պարզել է, որ տվյալ հայտարարություններում որպես սնանկության գործով հատուկ հաշվեհամար նշվել է «Արդշինբանկ» ՓԲԸ Կապանի մասնաճյուղում բացված թիվ 2470804396380060 բանկային հաշվեհամարը, մինչդեռ 16.01.2025թ. հայտարարության մեջ նշվել է այլ հաշվեհամար, մասնավորապես՝ «Արդշինբանկ» ՓԲԸ Կապանի մասնաճյուղում բացված 2470802104010000 հաշվեհամարը:

«ՇԵՆՈՆ ԿՈ» ՍՊ ընկերության կողմից ներկայացված, որպես բողոքի իրավական հիմնավորումներ է նշել, ստորև բերված հիմքերը.

- «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 23.1 հոդվածի համաձայն՝ Կառավարիչը պարտավոր է առաջնորդվել վարքագծի հետեւյալ կանոններով.

«Սնանկության մասին» ՀՀ օրենքի 27.2 հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ Կառավարչի նկատմամբ կարգապահական պատասխանատվության կիրառման հիմքերն են՝ 2) կառավարիչների մասնագիտական վարքագծի կանոնները խախտելը:

- Սնանկության գործով կառավարչի վարքագծի կանոնագրքի 1.3. կետի համաձայն՝ սնանկության գործով կառավարչի գործունեությունն իրականացվում է անկախության, օբյեկտիվության, բարեխղճության, եւ ողջամտության սկզբունքների հիման վրա:
- Նույն կանոնագրքի 1.6. կետի - համաձայն՝ սնանկության գործով կառավարիչը պարտավոր է օբյեկտիվորեն գնահատել ստեղծված իրավիճակները եւ իրական փաստերը, թույլ չտալ, որպեսզի կողմնակալությունը կամ որեւէ կողմնակի ճնշում ազդեն իր կողմից կայացված եզրակացությունների, որոշումների կամ գործողությունների վրա, որը կհանգեցնի անկախության, օբյեկտիվության, բարեխղճության եւ ողջամտության սկզբունքների խախտմանը:
- Նույն կանոնագրքի 1.33. կետի համաձայն՝ իր մասնագիտական գործունեությունն իրականացնելիս Կառավարիչը պետք է անկախ լինի, այսինքն ազատ ազդեցություններից, եւ հատկապես այնպիսի ազդեցություններից, որոնք կարող են ծագել կառավարչի անձնական հետաքրքրություններից կամ արտաքին ճնշումից եւ որը կարող է բացասաբար ազդել սնանկության գործի վրա: Կառավարիչը պետք է խուսափի իր անկախության թուլացումից եւ ուշադիր լինի իր մասնագիտական չափորոշիչների հանդեպ, որպեսզի նրան չհարմարեցնի երրորդ անձնաց գոհացնելու համար: Կառավարիչը պարտավոր է անկախ լինել նաեւ պարտապանից:
- Նույն կանոնագրքի 3.4. կետի համաձայն՝ պարտապանի գույքի վաճառքը կազմակերպելու համար Սնանկության գործով կառավարիչը ապահովում է իր կողմից իրականացված գործարքների հրապարակայնությունն ու մատչելիությունը, ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով հրապարակում է համապատասխան տեղեկություններ կայացվելիք աճուրդների վայրի, ժամանակի, եւ իրականացման կարգի մասին:
- «Կարգապահական հանձաժողովի գործունեության եւ սնանկության գործով կառավարչի նկատմամբ կարգապահական վարույթի իրականացման» կարգի 1.3. կետի համաձայն՝ Հանձնաժողովի անդամները իրենց գործունեությունն իրականացնելիս քննարկում են այնպիսի խախտումներ ու չարաշահումներ, որոնց արդյունքում սնանկության գործով կառավարչի կողմից չեն պահպանվել Կազմակերպության կանոնադրությամբ, վարքագծի

կանոնագրքով եւ Կազմակերպության ներքին իրավական փաստաթղթերով սահմանված պահանջները:

- Նույն կարգի 1.4. կետի համաձայն՝ Հանձնաժողովը սնանկության գործով կառավարչի նկատմամբ կարգապահական վարույթը հարուցում է պետական եւ ոչ պետական մարմինների, ինչպես նաեւ այլ անձանց գրավոր դիմումների, բողոքների (անանուն բողոքները ենթակա չեն քննարկման), ինչպես նաեւ զանգվածային լրատվամիջոցների հրապարակումների հիման վրա: Նույն կարգի 3.2. կետի համաձայն՝ Սույն կարգի համաձայն՝ կողմերն ունեն հավասար իրավունքներ՝ հրավիրելու վկաներ, հարցեր տալու ինչպես իր, այնպես էլ մյուս կողմին, բացառությամբ բակային, առեւտրային հարցերի:
- «Պարտապանին պատկանող գույքը հրապարակային սակարկություններով վաճառելու կարգը սահմանելու» 16.03.2020թ. N 116-Ն հրամանի 4-րդ կետի 5-րդ ենթակետի համաձայն՝ 4. Աճուրդի մասին հայտարարությունը պետք է պարունակի հետեւյալ տեղեկությունները 5. աճուրդի նախավճարի եւ մասնակցության վճարի, իսկ աճուրդի մասնակից չհամարվող անձանց համար՝ մուտքի վճարի չափը, վճարման կարգը եւ սնանկության հատուկ հաշվի հաշվեհամարը, որին պետք է կատարվեն վճարումները.
- Նույն հրամանի 39-րդ կետի համաձայն՝ աճուրդը չկայացած համարվելու օրը կառավարիչը կազմում է համապատասխան արձանագրություն, որում ի թիվս այլնի, նշվում է աճուրդը չկայանալու հիմքերն ու պատճառները:Տվյալ դեպքում, թիվ ՍԴ3/0029/04/15 սնանկության գործով կառավարիչ Գարիկ Յավրումյանի կողմից «Կոլչեդան» ՊՓԲԸ-ի սեփականության իրավունքով պատկանող ՀՀ Սյունիքի մարզ, Աճանան համայնք Թեջադին թաղամաս 1/1 (լոտ 2) եւ ՀՀ Սյունիքի մարզ, Աճանան համայնք Թեջադին թաղամաս 3/1 (լոտ 3) հասցեներում գտնվող անշարժ գույքերը դրվել են հրապարակային սակարկությամբ աճուրդով վաճառքի, որի վերաբերյալ հայտարարությունը տեղադրվել է azdarar.am պաշտոնական հայտարարությունների կայքում 22.12.2024թ.: Տվյալ աճուրդը պետք է կազմակերպվեր 09.01.2025թ.:

Ընդ որում, 03.01.2025թ. «ՇԵՆՈՆ ԿՈ» ՍՊ ընկերությունը 22.12.2024թ. հայտարարության մեջ նշված թիվ 2470804396380060 բանկային հաշվեհամարին փոխանցել է 09.01.2025թ. անցկացվելիք լոտ 2-ի եւ լոտ 3-ի նախավճարը եւ մասնակցության վճարը: Սակայն, ըստ Գարիկ Յավրումյանի, 09.01.2025թ. աճուրդը չի կայացել հայտերի բացակայության պատճառով, այնինչ ընկերությունը օրենքով սահմանված կարգով հայտ է ներկայացրել ՀՀ սնանկության դատարան:Բացի այդ, դիմումատուն իր 12.02.2025թ. գրությամբ խնդրել է տրամադրել 09.01.2025թ. աճուրդի արձանագրությունը, այդ աճուրդին վերաբերելի բոլոր փաստաթղթերը եւ ներկայացնել պարզաբանում, թե ինչու 09.01.2025թ. աճուրդին մասնակցած միակ մասնակիցը հաղթող չի ճանաչվել:Վերոգրյալ գրությանը Գարիկ Յավրումյանը կրկին նույն պատասխանն է ներկայացրել առ այն, որ 09.01.2025թ. աճուրդը չի կայացել հայտերի բացակայության պատճառով:Ավելին՝ ըստ դիմումատուի, խախտելով սնանկության գործով կառավարչի վարքագծի կանոնագրքով սահմանված պարտավորությունները ստել է, որ ոչ մի մասնակից 09.01.2025թ. չի ներկայացել աճուրդի կազմակերպման վայր: Ըստ բողոք ներկայացրած անձի, նման պատասխանով հաստատվում են դիմումատուի այն մտավախությունները, որ թիվ ՍԴ3/0029/04/15 սնանկության գործով կառավարիչ Գարիկ Յավրումյանը, azdarar.am պաշտոնական հայտարարությունների կայքում 29.10.2024թ.-ից սկսած, դիտավորյալ սխալ հաշվեհամար է տեղադրել, նպատակ ունենալով՝ հասկանալ, թե արդյո՞ք «Կոլչեդան» ՊՓԲԸ-ի սեփականության իրավունքով պատկանող անշարժ գույքերը գնելու ցանկություն, ինչ-որ մեկը ունի, թե՝ ոչ, իսկ այնհուտն արդեն տեղեկանալով, որ «ՇԵՆՈՆ ԿՈ» ՍՊ ընկերությունը նպատակ ունի ձեռք բերելու տվյալ գույքերը, բանավոր հայտնում է, որ azdarar.am պաշտոնական հայտարարությունների կայքում տեղադրված թիվ 2470804396380060

բանկային հաշվեհամարը սխալ է, այդ պատճառով աճուրդը չի կարող կայանալ եւ միաժամանակ նշել, որ կարող եք ներկայանալ մյուս աճուրդին:Ըստ բողոքաբերի, այս քայլով Գարիկ Յավրումյանը փորձել է «զգուշացնել» տվյալ անշարժ գույքերը ձեռք բերող այլ մասնակցի, որ կա ընկերություն, որը եւս շահագրգռված է «Կոլչեդան» ՊՓԲԸ-ի սեփականության իրավունքով պատկանող անշարժ գույքերը ձեռք բերելու համար:

Հարկ է նշել, որ azdarar.am պաշտոնական հայտարարությունների կայքում մի քանի անգամ գույքը հրապարակային սակարկությամբ վաճառքի հայտարարությունը տեղադրելուց կառավարիչը «չի նկատել», որ սնանկության գործով բացված հատուկ հաշվեհամարը սխալ է նշված:

Արդյունքում «ՇԵՆՈՆ ԿՈ» ՍՊ ընկերությունը 29.01.2025թ. եւս մեկ աճուրդի մասնակցության հայտ է մուտքագրում ՀՀ սնանկության դատարան եւ մասնակցում է 05.02.2025թ. կազմակերպված աճուրդին և կազմակերպված այդ աճուրդին բողոքաբեր ընկերությունը ԼՈՏ 2-ով եւ ԼՈՏ-3-ով վաճառվող անշարժ գույքերի հաղթող է ճանաչվում, սակայն լոտերի մեկնարկային գնից մի քանի տասնյակ անգամ բարձր գնով:

Ըստ բողոքաբերի, ստացվում է, որ թիվ ՍԴ3/0029/04/15 սնանկության գործով կառավարիչ Գարիկ Յավրումյանը դիտավորությամբ, խախտել է «ՇԵՆՈՆ ԿՈ» ՍՊ ընկերության սահմանադրական իրավունքները, ինչպես նաեւ պատճառել է ահռելի ֆինանսական փասներ:

Բացի այդ, ըստ բողոք ներկայացնող անձի, նման գործելաոճը չի կարող նպաստել սնանկության գործով կառավարիչների նկատմամբ վստահության ձեւավորմանը:

Բողոքաբերը նշել է նաև, որ վերոնշյալ փաստերը ամբողջությամբ կարող են հաստատվել նաեւ վկաների կողմից:

Իր բողոքով, «ՇԵՆՈՆ ԿՈ» ՍՊ ընկերությունը գտնում է, որ թիվ ՍԴ3/0029/04/15 սնանկության գործով կառավարիչ Գարիկ Յավրումյանի գործողություններում առկա են ակնհայտ դիտավորությամբ կատարված խախտումներ, որը հանգեցրել է 09.01.2025թ. կազմակերպված աճուրդի չկայացմանը, որն էլ իր հերթին խախտել է «ՇԵՆՈՆ ԿՈ» ՍՊ ընկերության սահմանադրական իրավունքները եւ պատճառել ֆինանսական մեծ կորուստներ:

Հաշվի առնելով իր բողոքում նշված հանգամանքները և հիմք ընդունելով «Կարգապահական հանձաժողովի գործունեության եւ սնանկության գործով կառավարչի նկատմամբ կարգապահական վարույթի իրականացման» կարգի 1.4 եւ 6.4 կետերի կարգավորումները, բողոք ներկայացրած անձ՝ «ՇԵՆՈՆ ԿՈ» ՍՊԸ-ն խնդրել է սնանկության գործով կառավարիչ Գարիկ Յավրումյանի նկատմամբ հարուցել կարգապահական վարույթ և նրա նկատմամբ կայացնել կարգապահական տույժի ենթարկելու մասին որոշում:

Ի պատասխան ներկայացված բողոքի, սնանկության գործով կառավարիչ՝ Գարիկ Յավրումյանը /այսուհետ կառավարիչ/ ներկայացրել է բացատրություն, որով վերջինս նշել է, որ,, Շենոն կո,, ՍՊԸ-ի 05.03.2025թ-ի բողոքի հիման վրա, «ՍԳԿԿ» ԻԿԿ կարգապահական հանձնաժողովը չի հարուցել կարգապահական վարույթ, առանց որի չի կարող քննարկվել կառավարչին ի կարգապահական պատասխանատվության ենթարկելու որն է հարց:Դրա վկայությունն այն է, որ իմ կողմից նշված բողոքի կապակցությամբ կարգապահական վարույթ հարուցված լինելու մասին որոշման կամ որեւէ փաստաթղթի տրամադրումս ինձ մերժվել է ի պատասխան իմ կողմից դրա վերաբերյալ երկու անգամ 26.03.2025թ-ին եւ 10.04.2025թ-ին հանձնաժողովին ուղղված գրավոր պահանջների, նշվելով որ ինձ տրամադրվել է բոլոր փաստաթղթերը՝ բողոքը կից նյութերով, իսկ կարգապահական վարույթը հարուցվել է «Սնանկության մասին,, ՀՀ օրենքով սահմանված կանոնների հիման վրա:

Իր բացատրությունով կառավարիչը նշել է, որ իբրև թե իր վերաբերյալ կարգապահական վարույթը չի հարուցվել ոչ ՀՀ «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 26, 27:2, 27.3 եւ 27.4 հոդվածներով եւ ոչ էլ ,,ՍԳԿ,, ԻԿԿ կանոնադրության 2024թ. նոր խմբագրությամբ կանոնադրությամբ, ինչպես նաեւ «ՍԳԿԿ» ԻԿԿ կարգապահական հանձնաժողովի գործունեության եւ սնանկության գործով կառավարչի նկատմամբ կարգապահական վարույթի իրականացման կարգի սահմանված կարգավորումների համաձայն, ընդ որում կարգապահական վարույթի հարուցումը՝ «ՍԳԿԿ» ԻԿԿ կարգապահական հանձնաժողովի իրավասությունն է նախատեսված « Սնանկության մասին» ՀՀ օրենքի վերը նշված նորմերով, ինչպես նաեւ «ՍԳԿԿ» ԻԿԿ կանոնադրության 2024թ. նոր կանոնադրությամբ 12.1 կետով, ինչպես նաեւ «ՍԳԿԿ»ԻԿԿ հանձնաժողովի գործունեության եւ սնանկության գործով կառավարչի նկատմամբ կարգապահական վարույթի իրականացման կարգի,, 5,1 կետով: Կառավարիչը նշել է նաև, որ ,,ՍԳԿԿ,, ԻԿԿ կանոնադրության 12.1 կետի համաձայն կարգապահական վարույթի հարուցման հիմք է հանդիսանում այն արարքը, որը «ՍԳԿԿ» ԻԿԿ-ի կանոնակարգով նախատեսված կարգով առաջացնում է պատասխանատվություն: Բացի այդ կառավարիչը նշել է, որ «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 27.2 հոդվածի 1-ին մասի համաձայն1. Կառավարչի նկատմամբ կարգապահական պատասխանատվության կիրառման հիմքերն են՝ իր լիազորություններն իրականացնելիս օրենքի կամ այլ նորմատիվ իրավական ակտերի պահանջների ակնհայտ խախտում թույլ տալը, որը կատարվել է դիտավորությամբ կամ կոպիտ անփութությամբ և կառավարիչների մասնագիտական վարքագծի կանոնները խախտելը:Ըստ կառավարիչի նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն, այդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով սահմանված հիմքով կառավարչի նկատմամբ կարգապահական վարույթ հարուցում է Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարը, իսկ նույն հոդվածի 4-րդ մասի համաձայն այդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով սահմանված հիմքով կառավարչի նկատմամբ կարգապահական վարույթ հարուցում է կառավարիչների ինքնակարգավորվող կազմակերպությունը:,,Սնանկության մասին,, ՀՀ օրենքի 27.3 հոդվածի 1-ին մասի համաձայն, Կառավարչի նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու առիթներն են՝ վարույթ հարուցող անձանց կողմից կարգապահական պատասխանատվության հիմք հանդիսացող խախտման հայտնաբերումը, կառավարիչների ինքնակարգավորվող կազմակերպության դիմումը և անձի, պետական եւ տեղական ինքնակառավարման մարմնի, պաշտոնատար անձի հաղորդումը:Ըստ կառավարիչի կողմից ներկայացված բացատրության, «ՍԳԿԿ» ԻԿԿ կարգապահական հանձնաժողովի գործունեության եւ սնանկության գործով կառավարչի նկատմամբ կարգապահական վարույթի իրականացման կարգի, 4,6 կետի համաձայն, հանձնաժողովի նշանակված նիստին հանձնաժողովի նախագահը պետք է ներկայացնի հայտնաբերված այն խախտումը, որի վերաբերյալ հարուցվել է կարգապահական վարույթը, որից հետո սկսվի քննարկումները: Այս կարգավորումների միմյանց է համադրությամբ վերլուծությունը վկայում է, որ «Շենոն Կո» ՍՊԸ-ի 05.03.2025թ-ի բողոք հաղորդումս ընդամենը կառավարչի նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու առիթ է, մինչդեռ բողոքի՝ հողորդման հիմքում կառավարչին վերագրվող գործողությունների կամ անգործությունն ինքնին հիմք չէ «ՍԳԿԿ» ԻԿԿ կարգապահական հանձնաժողովի կողմից կարգապահական վարույթ հարուցելու համար: Հանձնաժողովը «ԳԿԿ» ԻԿԿ կանոնադրության 12.1 կետի համաձայն պետք է արձանագրի այն խախտումը կարգապահական վարույթի հարուցման հիմք հանդիսացող այն արարքը, որը ,,ՍԳԿԿ,, ԻԿԿ-ի կանոնակարգով նախատեսված կարգով առաջացնում է պատասխանատվություն՝ կառավարիչի մասնագիտական վարքագծի կանոնի, կամ կաննոների կոնկրետ այն խախտումները, որոնք սահմանված են վարքագծի կանոններով եւ, որոնց հիմքով միայն հանձնաժողովը կարող է հարուցել կարգապահական վարույթ:Ըստ կառավարիչի, բողք ներկայացված անձը, բողոքով

կառավարչին վերագրվել է բազմաթիվ արարքներ, որոնք ոչ միայն վարքագծի կանոնների խախտում չեն հանդիսանում, այլեւ ընդհանրապես խախտում չեն հանդիսանում:Ըստ կառավարիչի, միայն իր կողմից նշված հանգամանքներով հարուցված կարգապահական վարույթի պայմաններում է հնարավոր պարզել, թե արդյոք հանձնաժողովն քննության է առնում կառավարչին վերագրված վարքագծի կանոնի խախտում, թե այլ մարմնի քննության ենթական խախտում:

Կառավարիչը ավելորդ չի համարել ընդգծել, իր անմեղության կանխավարկածի վերաբերյալ «ՍԳԿԿ» ԻԿԿ կարգապահական հանձնաժողովի գործունեության եւ սնանկության գործով կառավարչի նկատմամբ կարգապահական վարույթի իրականացման կարգի 1,8 կետի կարգավորումը, համաձայն որի կարգապահական խախտման կատարման մեջ կասկածվող կառավարիչը համարվում է անմեղ, քանի դեռ նրա մեղավորությունը ապացուցված չէ օրենքին եւ կանոնակարգին համապատասխան ընդունված Դիտորդ խորհրդի կարգապահական պատասխանատվության ենթարկելու մասին օրինական ուժի մեջ մտած որոշմամբ:

Փաստորեն, անկախ նույնիսկ այն հանգամանքի, որ ես չէ, որ պետք է ապացուցեմ, որ անմեղ եմ, այլ հանձնաժողովը պետք է ապացուցի իմ մեղավորությունը, այդուհանդերձ այդ նորմը եւս սահմանում է կոնկրետ կարգապահական այն խախտումը, որում կասկածվում է կառավարիչը: Հետեւաբար, անկախ իր ջանքերի պարզելու համար, թե կոնկրետ ի՞նչ խախտման վարքագծի կանոնի, որ կետով նախատեսված խախտման մեջ է կառավարիչը կասկածվում, որ արարքի համար է իր նկատմամբ հարուցվել կարգապահական վարույթ, մինչեւ այժմ իրեն չի բացահայտվել, թե կանոնակարգի որ նորմով նախատեսված վարքագծի կանոնի կամ կանոնների խախտում է իրեն վերագրվում, որպեսզի դրա կապակցությամբ ներկայացնի բացատրություն:

Ըստ կառավարիչի, առանց հարուցված կարգապահական վարույթի, որով կարձանագրվեր իրեն վերագրվող եւ հանձնաժողովի քննության ենթակա արարքի բնույթը, կարգապահական պատասխանատվության, տույժի ենթարկելու հարցի քննությունն ըստ կառավարիչի իրավաչափ չէ, առավել եւս, որ բողոքն հասցեագրվել է ոչ միայն հանձնաժողովին, այլեւ ՀՀ Արդարադատության նախարարին, ինչպես բողոքաբերի հետագա գրություններից կառավարիչը ենթադրել եմ նաեւ, դատարանին:

Կառավարիչը նշել է նաև, որ հանձնաժողովը պետք է բացահայտեր, թե իրեն վերագրվող արարքներից, որն է որ հենց հանձնաժողովի քննության ենթակա խախտում է, այլ ոչ թե ՀՀ Արդարադատության նախարարի կամ դատարանի քննության ենթակա խախտում, առավել եւս որ մեջացած բոլոր խախտումների մասով, ,,Սնանկության մասին,, ՀՀ օրենքի 27,4 հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի համաձայն կարգապահական վարույթ չի կարող հարուցվել, իսկ հարուցված կարգապահական վարույթներն էլ ենթակա են կարճման, եթե սնանկության գործն ավարտված չէ, իսկ սույն Սնանկության գործն ավարտված չէ:

Բացի վերը նշվածը, իր նկատմամբ ,, հարուցված,, կարգապահական վարույթի դեմ, կառավարիչը առարկել է նաեւ այն հիմքով, որ, ,,Շենոն Կո,, ՍՊԸ-ն բողոքում նշել է 18 փաստական հիմնավորումներ շարադրելով այն 1.1 կետից մինչեւ 1.8 կետերի ներքո եւ 4 իրավական հիմնավորումներ կանոնակարգի 1.3,, 1,6, 1,33 եւ 3,4 կետերով նախատեսված կանոնների խախտումներ, մինչդեռ իրեն վերագրվող փաստական խախտումներից որեւէ մեկը չի ներառվում իրեն վերագրվող իրավական կանոնների դիսպոզիցիայում որպես խախտում, քանի որ մատնանշված իրավական նորմերում վարքագծի խախտում է համարվում, կառավարչի անկախության օբյեկտիվության, բարեխղճության եւ ողջամտության սկզբունքների հիման վրա չգործելը/1.3 կողմնակի ճնշումների եւ ազդեցության ենթարկվել, 1.6,

անկախ չլինելը 1.33 եւ պարտապանի գույքի վաճառքն կազմակերպելիս իր իրականացրած գործարքների հրապարակայնությունն ու մատչելիությունը չապահովելը) 3.4/:
Կառավարիչը իր բացատրությամբ հատուկ ընդգծել է, որ չի ընդունում բողոքում նշված, իրեն վերագրված որև է արարքի սխալ կատարումը կամ , առավել ևս դրանց դիտավորությամբ կատարումը:Կառավարիչը կարծում է, որ դրանք անհիմն ենթադրություններ են, որոնք չեն կարող ապացուցվել, հակառակը կարող է ապացուցվել դրանց զրպարտություն լինելը՝ այն է իրականությանը չհամապատասխանելը:
Այդուհանդերձ, եթե նույնիսկ դրանք իրականություն լինեն, և ինքը 22.12.2024թ-ի աճուրդի հայտարարության մեջ սխալ հաշվեհամար նշած լինի, այն էլ դիտավորությամբ, ապա այն որև է մեկնաբանմամբ չի կարող համարվել կանոնակարգի վարքագծի խախտում, քանի որ ոչ կանոնակարգի 1,3,, 1,6, 1.33 եւ 3,4 կետերով եւ ոչ էլ կանոնակարգի որեւէ կետով կառավարչի նման վարքագծի կանոն սահմանված չէ:

Փաստորեն քանի որ, կառավարիչը այդպես էլ չի հասկացել, թե իրեն ինչ խախտում են վերագրում կամ ինչի մեջ են կասկածում, ստիպված է անդրադառնալ ,,Շենոն ԿՈ,, ՍՊԸ-ն բողոքում նշված 18 փաստական հիմնավորումներին եւ կարգապահական հանձնաժողովի համար ևս բացահայտել, որ դրանցում իրեն վերագրվող հանձնաժողովի կողմից քննարկման ենթակա խախտում առկա է:

Ըստ կառավարչի, բողոքում նշված փաստերի զգալի մասը «Կոլչեդան» ՊՓԲԸ-ն սնանկության վարույթի հետ կապված եւ աճուրդի անցկացման հետ դատավարական գործողությունների եւ կառավարչի գործողությունների մասին փաստական հանգամանքներ են՝ մասնավորապես՝ 1,1-ից մինչեւ 1.5-րդ կետերում, ինչպես նաեւ 1.13, 1.14, 1.16, 1417 եւ 1.14 նշված փաստերը, այն է 11 փաստեր, որոնք հաստատված են դատարանի որոշումներով, աճուրդի հայտարարություններով, արձանագրություններով, հարցումներով եւ պատասխան գրություններով, որոնք անվիճելի են: Ավելին՝ դրանցով հաստատվում են կառավարչի կողմից օբյեկտիվ, օբյեկտիվ, բարեխիղճ, անկախ, առանց այլ ազդեցության հրապարակայնորեն կատարված գործողություններ, ավելին ըստ կառավարիչի դրանք խախտումներ չեն, եւ ինչքանով որ հասկանալի է, դրանք չի վերագրվում իրեն որպես խախտումներ:Իսկ ինչ վերաբերվում է մյուս 7 փաստերին շարադրված՝ 1.7, 1.8, 1.9, 110, 111, 112 եւ 1.15 կետերով, ապա դրանցից միայն 1.9 եւ 1.10 կետերում շարադրված փաստերն են, որոնք վերագրվել են կամ կարող են վերագրվել ինձ՝ կառավարչիս, որպես խախտում, քանի որ մնացած կետերում նշված փաստերը իր կողմից կատարված գործողության կամ անգործության մասին փաստեր չեն: Ըստ կառավարչի իրեն վերագրված փաստերում նշվել է հետեւյալը՝ կառավարիչը հայտնել է, որ 22.12.2024թ-ի հայտարարության մեջ նշված հաշվեհամարը սխալ է նշել, պետք է ներկայանալ հաջորդ կազմակերպվող կրկնաճուրդին և այդ ժամանակ արդեն հասկանալի էր, որ կառավարիչը դիտավորյալ սխալ հաշվեհամար է նշել պարզելու համար, արդյո՞ք տվյալ աճուրդին այլ մասնակիցներ եւս կան թե ոչ:
Վերը նշված հիմնավորմամբ կառավարիչը հայտնել է, որ նա չի հասկանում այս գործողությունների՝ այդ թվում հայտարարության մեջ սխալ հաշվեհամար նշելը եւ այդ հիմքով կրկնաճուրդ կազմակերպելը կամ թեկուզ այդ մասին բողոքաբերին հայտնելը, առավել եւս այդ գործողությունը դիտավորյալ կատարելը վարքագծի ո՞ր կանոնի խախտում է:
Ըստ կառավարչի, ամենակարեւորն այն է, որ այդ խախտումները ինքը թույլ չի տվել, մասնավորապես՝ 22.12.2024թ-ի հայտարարության մեջ հաշվեհամարը սխալ չի նշվել, դա իր սնանկության գործով /կառավարչի/ հաշվեհամարն է, որը նշվել է ինչպես այդ, այնպես էլ դրա նախորդ աճուրդի հայտարարություններում, եւ սնանկության գործերով պրակտիկայում ինքը միակ կառավարիչը չէ, որ հայտարարության մեջ սնանկության կառավարչի՝ հաշվհամարն են նշած լինում:Ըստ կառավարչի, նշվածը թույլատրելի է կամ առնվազն սխալ չի համարվում և

եթե դա կատարվում է դատավարական ժամկետները պահելու անհրաժեշտությամբ պայմանավորված կամ այդ պահին լրացուցիչ ծախսեր կատարելու անհնարինությամբ պայմանավորված կամ էլ պատահականորեն անզգուշությամբ դրսեւորված վրիպում է, որը որեւէ պարագայում ինքնին չի կարող համարվել դիտավորություն: Ըստ կառավարչի պարզաբանման, նման դեպքերում այդ կառավարչի հաշվեհամարին մուտքագրված գումարները՝ փոխանցվում են սնանկության հատուկ հաշվին եւ բաշխվում օրենքով սահմանված կարգով: Այս խնդրի հետ կապված հարց կարող է բարձրացնել դատարանը, այլ ոչ թե աճուրդի մասնակիցը եւ նրա բողոքի հիման վրա ՝ հանձնաժողովը:

Կառավարիչը հավելել է նաև, որ եթե նույնիսկ սնանկության կառավարչի հաշվեհամարի նշումը սխալ էր, դա որեւէ կերպ չի խոչընդոտել 19.01.2025թ-ի աճուրդի կայացմանը, քանի որ աճուրդի չկայացման հիմք է հանդիսացել ոչ թե վճարները սխալ հաշվեհամարին փոխանցված լինելը, կամ հաշվեհամարի սխալի պատճառով վճարները կատարելու անհնարինությունը, այլ հայտերի բացակայությունը, որի մասին նշվել է ինչպես 09.01.2025թ-ի աճուրդի չկայացման արձանագրությունում, այնպես էլ հաջորդ աճուրդների մասին հայտարարություններում եւ «Շենոն կո,, ԱՊԸ-ան գրության պատասխանում:

Եթե հայտարարված 09.01.2025թ-ի աճուրդին դատարանի կողմից ինձ ներկայացված լիներ սահմանված ժամկետում դատարան մուտքագրված եւ հաշվառված հայտը, եւ դրան կից առնվազն 03.01.2025թ-ին աճուրդի հայտարարությամբ նշված / սխալ/ հաշվեհամարին կատարված փոխանցման անդորրագրերը եւ օրենքով սահմանված այլ անհրաժեշտ ապացույցները, ավելին, եթե աճուրդի օրը նշված հայտատուն կամ նրա լիազորված ներկայացուցիչը մասնակցեր աճուրդին , այդ աճուրդը կկայանար :

Մինչդեռ դատարանի կողմից ինձ որեւէ եղանակով չի հանձնվել է ,,Շենոն Կո,, ՍՊԸ-ի 03.01.205թ-ին դատարան մուտքագրված հայտը եւ դրան կից ներկայացված փաստաթղթերը այդ թվում վճարման անդորրագրերը: Այն ներկայացված չէ իրեն առ այսօր:

Ինչ վերաբերում է «Շենոն կո» ՍՊԸ-ն կողմից 1.7 կետում նշված փաստին, որ 03.01.2025թ-ին նշված 247090439338000 բանկային հաշվեհամարին փոխանցվել է լոտ 2-ի եւ լոտ 3-ի նախավճարը, եւ 1,8 կետում նշված փաստին, որ 03.01.2025թ-ի ՀՀ Սնանկության դատարան է մուտքագրել աճուրդի մասնակցության հայտ, ապա ըստ կառավարիչի, այդ փաստերը հիմնավորող ապացույցներ բողոքաբերը չի ներկայացրել:

Բողոքին կից կառավարչին տրամադրված հայտի պատճենի հիման վրա, առկա է դատարանի մուտքի շտամպ 13.01.2024թ-ի թվագրմամբ, այլ ոչ թե 2025թ-ի թվագրմամբ: Ըստ կառավարիչի դա արդեն իսկ բավարար է արժանահավատ չհամարելու բողոքաբերի փաստարկները, ավելին այդպիսի հայտ իրեն ներկայացված լինելու դեպքում անգամ, նա չեր կարող այն համարել 09.01.2025թ- ի աճուրդի համար ներկայացված հայտ: Բացի այդ բողոքին, իբրև հայտին կից ներկայացված նախավճարի եւ մասնակցության վճարների անդորագրերը՝ տրված են հաշվապահական ծրագրից 06.02.2025թ-ին, այլ ոչ թե 03.01.2025թ-ին, ավելին՝ այն համակարգչից թղթի վրա արտատպվել է 05.03.2025 թ. ժամը 4:32-ին, որում առկա չէ պաշտոնական տեղեկանք, կամ բնօրինակ վճարման անդդորագիր, որն իրապես կցված լիներ հայտին, եւ վկայեր այդ ամսաթվով վճարումների մասին, ինչպիսիք ներկայացվել են հաջորդ աճուրդի մասնակցության համար: Դրանք պաշտոնական վավերապայմաններ չունեն, որի պայմանում այդպիսի թուղթ կարող է պատրաստել ցանկացած անձ համակարգչային եղանակով, ինչպես նաև կառավարիչի մոտ հարց է առաջանում, թե ,,Շենոն կո,, ՍՊԸ-ն ինչու՞ հանձնաժողովին չի ներկայացրել սնանկության դատարանին ներկայացված վճարման անդորրագրերի պատճենները, այլ ներկայացրել է հայտի ներկայացման ամսաթվին հաջորդող ավելի քան մեկ ամիս անց ամսաթվով թվագրված փոխանցման հաշիվներից քաղվածքներ, այն էլ առանց պատշաճ հաստատման:

Ըստ կառավարչի, առնվազն երկու տարբեր ողջամիտ ենթադրություն կարելի է անել, առաջինը՝ որ հայտն իսկապես ներկայացվել է 03.01.2024թ-ին, եւ դա նախորդ տարվա աճուրդի մասնակցության հայտի պատճեն է, առավել ևս, որ սույն գործով նշված գույքերի աճուրդ սկսվել է դեռեւս 2024 թ-ի ապրիլից եւ երկրորդ ենթադրությունը հայտի մուտքագրման մեջ, մուտքագրողի հնարավոր սխալն է . վրիպակը: Ըստ կառավարչի, երկու դեպքում էլ կառավարիչը որեւէ առնչություն չունի մուտքագրման հետ, որով հույս է հայտնել, որ իրեն չեն մեղադրի: Կառավարիչը մատնանշել է, որ առնվազն այս սխալի, նաեւ իր նկատմամբ հանձնաժողովի կողմից օրինակ 28.03.2025թ-ի նիստի մասին «...Կարգով,, սահմանված ոնվազն 10 օր առաջ չծանուցելու՝ այն է ժամկետի խախտման ծանուցման սխալների օրինակները վկայում են, որ սխալներ կարող են կատարել բոլորը, սակայն ամեն սխալ վերագրել դիտավորության, անբարեխղճության , այն էլ առանց այ փաստերի եւ կամ ապացույցների հետ համադրման հիմնազուրկ է:

Կառավարիչը հարկ է համարել ընդգծել, որ նույնիսկ, եթե իր կողմից 19.12.2025թ-ի աճուրդի հայտարարության մեջ հաշվեհամարի նշումը սխալ է եղել եւ դա է հանդիսացել իր նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու հանգամանքը, ապա ինքը հաջորդիվ ուղղել է իր սխալը,05.02.2025թ-ի աճուրդի հայտարարության մեջ նշել եմ ճիշտ հաշվեհամար, որով վերացրել է կարգապահական վարույթ հարուցելու հիմք հանդիսացած հանգամանքը, որն ընդունել է հենց ինքը բողոքաբերը իր բողոքի 1.15 կետում, հետեւաբար նման պայմանում առկա է կարգապահական վարույթը բացառող հանգամանք, այն է ըստ կառավարիչի, հարուցված կարգապահական վարույթը ենթակա է կարճման, քանի որ « Սնանկության մասին» ՀՀ օրենքի 27.4 հոդվածի 1-ին մասի 7-րդ կետի համաձայն Կարգապահական վարույթ հարուցող մարմինը չի հարուցում կառավարչին կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ վարույթ, իսկ հարուցված վարույթը կարճում է, եթե՝ մինչեւ կարգապահական պատասխանատվության ենթարկելու մասին որոշում կայացնելը կառավարիչը վերացրել է կարգապահական վարույթ հարուցելու հիմք հանդիսացած հանգամանքները:

Այս փաստերի մասով կառավարիչը ուշագրավ է համարել այն, որ 08.01.2025թ-ի աճուրդն իրապես չի կայացել հայտերի բացակայության պատճառով և ինքը որպես «Կոլչեդան» ՊՓԲԸ-ի սնանկության գործով կառավարիչ , ինչպես 13.01.2025թ-ին, այնպես էլ առ այսօր չի ստացել 09.01.2025թ-ի աճուրդի մասնակցության որեւէ հայտ և նշված փաստը հաստատելու համար սույն բացատրությանը կից ներկայացնում է հարցումս ու Սնանկության դատարանի պատասխան գրությունը, որը ոչ միայն բացառում է 09. 01. 2025թ-ի աճուրդի չկայացման հիմքի սխալ լինելը, այլեւ բացառում է աճուրդի չկայացման հարցում իր անբարեղճությունը, իր մեղավորությունը կամ դիտավորությունը:

Առավել ևս Կառավարիչը նշել է նաեւ, որ որև է եղանակով տեղեկացված չի եղել 09.01.2025թ-ին իր կողմից հայտարարված աճուրդի համար ոչ « Շենոն ԿՈ» ՍՊԸ-ն, ոչ էլ այլ անձի կողմից հայտ ներկայացված լինելու մասին: Ավելին, որեւէ մեկը հայտարարված աճուրդի օրը եւ ժամին չի ներկայացել աճուրդի վայր:

Կառավարիչը նշել է որ, նշված՝ 09.01.2025թ-ի աճուրդով՝ բոլոր 4 լոտերով հետաքրքրված տարբեր անձինք են եղել, ովքեր հայտարարության մեջ նշված իր հեռախոսահամարով զանգել են տարբեր ժամանակահատվածներում տարբեր ճշտումներ եւ հարցումներ կատարելով, որոնցից մեկն էլ եղել է «Շենոն Կո» ՍՊԸ-ի տնօրեն Վարդան Էլբակյանը, ով 1 անգամ 07.01.2025թ-ին ժամը 13:39-ին 096585887 հեռախոսահամարով զանգել է ,, որի ժամանակ իրենից ճշտել է լոտերի գույքի տեղը:Կառավարիչը նրան, ինչպես նաև այլ հետաքրքրվող անձանց, տվել է բավարար՝ մատչելի, թույլատրելի բարեխիղճ պատասխաններ, նա միակ հետաքրքրվողը չի եղել, նշված լոտերի համար, հետաքրքրվել են նաեւ այլ անձինք, այդ թվում

«Էկո Փրոդաքթ» ընկերությունը, ում ներկայացուցիչը, 095222054 հեռախոսահամարով զանգահարել է իրեն 03.01.2025թ-ին, ժամը 11:41-ին եւ 18.11.2025թ-ի ժամը 11:06-ին, ով հետագայում պարզվեց մասնակցել է 03.04.2025թ-ի աճուրդին եւ հաղթել աճուրդում՝ ներկայացուցիչ Վարդան Դաղայանը:

Կառավարչի կողմից ներկայացված բացատրությանը կից, նա ներկայացրել է նաեւ իր հեռախոսին նշված օրերին կատարված մուտքի զանգերի քաղվածքը, եւ նշել է, որ վիվասել, USU -ից պահանջել է իր հեռախոսի մուտքի զանգերի վերծանումները, սակայն պատասխանել են , որ այն գաղտնի է և կարող է տրամադրվել միայն դատարանի որոշմամբ, կամ առնվազն յուրաքանչյուր անձ կարող է ձեռք բերել իր հեռախոսահամարից կատարված ելքի զանգերը: Հետեւաբար, եթե «Շենոն ԿՈ» ՍՊԸ-ն մինչեւ 09.01.2025թ.-ը ներառյալ կամ հենց աճուրդի օրը զանգել է իրեն, կամ որեւէ հաղորդագրություն է ուղարկել իրեն, կամ գտնվել է Կապան քաղաքում՝ աճուրդի վայրում, /Երեւանից ավելի քան 320կմ հեռավորության վրա կարող է վերցնել իր հեռախոսահամարի վերծանումները, դրանք սպասարկող ալեհավաք կայանների մասին տեղեկատվություն, որով էլ հաստատապես կհաստատվի, որ նա բացի 07. 01. 2025թ-ից մինչեւ 04. 02. 2025թ-ը իր հետ հեռախոսով չի կապվել, եւ որեւէ հարց չի բարձրացրել, որեւէ խնդրի մասին չի բարձրաձայնել: Հակառակը, նա Կապան քաղաքում աճուրդի վայրում առաջին անգամ եղել է 05.12.2025թ-ին հաջորդ աճուրդին եւ նշանակված ժամից՝ ժամը 11:00-ից 40 րոպե շուտ հեռախոսով կրկին զանգել է, կից ներկայցվում է նաեւ այդ զանգերի քաղվածքը եւ ճշտել աճուրդի վայրը հեռախոսը փոխանցել է տաքսու վարորդին, որին ինքը մանրամասն բացատրել է որտեղ աճուրդի վայրը թող այդ տաքսու վարորդին, որպես վկա բերի: Կառավարիչը կարծում է, որ նման հանգամանքների դասավորությունը հնարավորություն է տալիս հանգել ողջամիտ միակ ճշմարիտ ենթադրության այն մասին, որ Վարդան Էլբակյանը 15.02.2025-ին առաջին անգամ էր ներկայանում աճուրդի վայր, այլապես նախորդ անգամ աճուրդի վայր ներկայացած լինելու դեպքում, չէր ճշտի աճուրդի վայրը: Ավելին՝ ներկայիս տեխնոլոգիաների պայմանում, նման փաստն ամենահեշտ եւ արագ ապացուցվող փաստն է, եւ կառավարիչին զրպարտելու փոխարեն, բողոքաբերից պահանջեր ներկայացնելու. 19.21.2025թ-ին իր 09.01.2025թ-ին իր 096585887 հեռախոսահամարի սպասարկման ալեհավաք կայանների վայրերի մասին քաղվածք, որից պարզ կլինի թե որտեղ է՞ նա գտնվել այդ օրը, այդ ժամին:

Ավելին, ըստ կառավարիչի բողոքաբերն իրեն մեղադրել է հաշվեհամարի սխալ նշելու դիտավորության մեջ, որպես դիտավորության հիմնավորում նշելով, թե իբր ես նպատակ ունեի պարզելու աճուրդի այլ մասնակիցների առակայության մասին: Սակայն ըստ կառավարիչի, ինչպես դիտավորությունը, այնպես էլ դրա հիմքում իրեն վերագրվող պատճառները հիմնազուրկ ենթադրություններ են, ոչնչով չապացուցված և կառավարիչը չի էլ հասկանում, թե ինչու է նման ենթադրություն ձեւավորվել, քանի որ հաշվեհամարը սխալ նշելով հնարավոր չէ պարզել աճուրդին այլ մասնակիցների առկայությունը: Կառավարիչը նշել է, որ դա պարզելու համար ընդամենը պետք է ուսումնասիրել ներկայացված հայտերը, իսկ եթե բողոքաբերն ի նկատի է ունեցել, թե ինքը փորձել է պարզել, թե կա՞ն դա հենց արդյոք աճուրդին մասնակցելու ցանկություն ունեցող անձինք, ապա կառավարիչը նշել է նաև, որ պարտապանի գույքն իրացնելու կառավարչի գործառույթն է, որը կատարվում է աճուրդի մասին հրապարակային հայտարարություն տալով, որը գաղտնիք չէ: Հակառակն իր կողմից կանոնակարգի 3.4 կետի համաձայն, կառավարիչը պարտավոր է ապահովել իրականացված գործարքների հրապարակայնությունն ու մատչելիությունը, սահմանված կարգով հրապարակել տեղեկություններ կայանալիք աճուրդի վայրի, ժամանակի եւ իրականացման կարգի մասին, ինչ էլ բարեխիղճ կատարել է:

Ինչ վերաբերվում է 1,15 կետում նշված փաստին, որ կառավարիչը գիտակցելով, որ ընկերությունը հետաքրքրված է վերոհիշյալ գործերով, չգիտես ինչպես հայտնվում են այլ մասնակիցներ, ապա կառավարիչը չի հասկանում թե սրանում իր գործողությունն կամ անգործությունը ո՞րն է, որի համար պետք է պատասխան տա, այն, որ գիտակցել է որ ընկերությունը հետաքրքրվա՞ծ է, թե որ,, չգիտես,, ինչու այլ մասնակցներ էլ են հայտնվել:
Կառավարիչը հարկ է համարում նշել նաեւ, որ անկախ իրեն վերագրված խախտումների,,
«Շենոն Կո» ՍՊԸ-ի որեւէ իրավունք չի խախտվել, նա մասնակցել է հաջորդ 05.02.2025թ-ի աճուրդին, ավելին ճանաչվել է հաղթող: Հետեւաբար փաստարկները, որ աճուրդի չկայացման պատճառով ինքը կրել է ֆինանսական վնասներ, այն էլ,, Ահռելի,, առավել քան սխալ են : Ավելին նրա կրած հիմական ֆինանսական վնասը, կարող էր առաջանալ իր իսկ հայտարարած գնով աճուրդին հաղթելուց, օրենքով սահմանված ժամկետում իր հայտարարած գինը չվճարելու արդյունքում, իր վճարած նախավճարը չվերադարձնելու չափով, որը հետեւանք է ոչ թե կառավարչի գործողությունների, այլ իր պարտավորության չկատարման:
Կառավարիչը նշել է, որ այս Սնանկության վարույթի ընթացքում եւ ընդհանրապես Սնակության կառավարիչ աշխատելու 20 տարիների ընթացքում չի դրսեւորել մի այնպիսի վարքագիծ, չի ենթարկվել որեւէ կողմակի, անօրինական ազդեցության կամ ճնշումների, չի դրսեւորել այնպիսի վարքագիծ որը վտանգի իր անկախությունն եւ որի հետեւանքով կարող էր կորսվել կառավարիչների նկատմամբ վստահությունը, ինչպիսի թյուր տպավորություն որ փորձում է ստեղծել բողոքաբերը:
Հակառակը գործողություններով, կառավարիչը կարծում է բողոքաբերն իր փաստարկներով բողոքներ, դիմումներ, ներկայացնելով որոնց օրինակները կից ներկայացվել են, փորձում է ստեղծել իրավիճակ, որպեսզի այլ անձանց մասնակցությունը աճուրդին բացառվի եւ ինքն ունենա աճուրդի հայտարարված գույքը մեկնարկային ցածր գնով ձեռք բերելու հնարավորություն, այդ կերպ զրկելով այլ անձանց հավասար պայմաններում աճուրդին մասնակցելու իրավունքից: Եվ կառավարչի կարծիքով բողոքաբերի այս ոչ իրավաչափ նպատակը իրագործված չլինելը, դրդել է վերջինիս նման անհիմն փաստարկներով բողոքներ ներկայացնել հնարավոր բոլոր մարմիններին, այդ թվում դատարան, ինչի միջոցով հավանաբար, փորձում է ազդեցություն, ճնշում գործադրել իր վրա, որում իրեն մեղադրում են, մինչդեռ այդ փորձերն իրագործելի չեն:
Կառավարիչը հատուկ ընդգծել է, որ սույն բացատրությամբ անդրադարձել է միայն բողոքում նշված հիմքերին, քանի որ դրանում չնշված փաստերը սույն կարգապահական վարույթի կարգապահական շրջանակներում քննության առարկա չեն կարող լինել: Ըստ կառավարչի վարույթի շրջանակներում չի կարող գնահատվել ապացույց, որն իրեն ծանոթ չէ, իսկ 10.04.2025թ-ի գրությամբ, լրացուցիչ ներկայացված ապացույցներ լինելու դեպքում դրանք եւս իրեն տրամադրելու պահանջին, ստացել է պատասխան, որ այդպիսիք առկա չեն:
Ամփոփելով վերը շարադրված բոլոր առարկություններն ու հիմնավորումները, հիմք ընդունելով, որ առկա չէ, կառավարչին նկատմամբ հարուցված կարգապահական վարույթ, ավելին առկա չէ կարգապահական վարույթի հարուցման հիմք, այն էէ ինձ վերագրված բողոքում նշված խախտումները չեն համարվում վարկագծի կանոնի խախտում, ավելին իմ կողմից թույլ չի տրվել նշված խախտումները, առավել եւս դիտավորությամբ այն է բացակայում են կարգապահական խախտման հիմքերը եւ հատկանիշները, ղեկավարվելով,, Սնանկության մասին,, ՀՀ օրենքի 27.4 հոդվածի 1-ին մասի 1-ին ենթակետով, կառավարիչը խնդրել է կայացնել կարգապահական վարույթը կարճելու մասին եզրակացություն:
Կարգապահական նիստի ընթացքում, կարգապահական հանձնաժողովի նախագահ՝ Արման Սարգսյանը, հաշվի առնելով այն հանգամանքը, որ Գարիկ Յավրումյանը չէր ներկայացել նիստին, առաջարկեց, որպեսզի նախ իր դիմում բողոքը ներկայացնի ,,Շենոն Կո,, ՍՊԸ-ի

ներկայացուցիչը, իսկ այնուհետև, եթե լինեն հարցեր, ապա հանձնաժողովի անդամները այդ հարցերը ուղղեն ներկայացուցիչին, որին հանձնաժողովի բոլոր ներկայացուցիչները քվեարկեցին կողմ:

Նշված սահմանված կարգի հիմքով, բողոք ներկայացնող անձի ներկայացուցիչը բանավոր կերպով պնդեց իր գրավոր ներկայացրած բողոքը և ըստ էության որևիցե մի բան չավելացրեց:

Բողոք ներկայացրած անձին իր հարցերը ուղղեց Ա.Սարգսյանը, որը հարցրեց տեղի ունեցած կամ չունեցած աճուրդների մասին, որին ի պատասխան բողոք ներկայացրած անձը հայտնեց, որ ինչպես արդեն նշել են 09.01.2025թ.-ի աճուրդը կառավարիչը չի կատարել այն հիմնավորվամբ, որ հաշիվը սխալ է, դրանից հետո տեղի են ունեցել էլի աճուրդներ, որոնք ըստ կառավարչի կողմից տրված պատասխան գրության և ըստ իր տեղեկության, չեն կայացել լոտի ամբողջ արժեքը չվճարելու պատճառով:

Ա.Սարգսյանի մեկ այլ հարցին, թե արդյոք չկայացած աճուրդներից հետո, կառավարիչը նվազեցրել է մեկնարկային արժեքը թե ոչ, բողոք ներկայացրած անձի ներկայացուցիչը հայտնեց, որ ոչ չի նվազեցվել:

Ա.Սարգսյանի մեկ այլ հարցին, թե խնդրում եմ նկարագրեք մանրամասն, թե Ձեր կողմից ներկայացրած հայտը աճուրդում քննարկելու նպատակով, ինչ է տեղի ունեցել, որին ի պատասխան ներկայացուցիչը հայտնեց, որ այս պահին հստակ տեղեկություն չունի թե ,,Շենոն Կո,, ընկերության տնօրենը աճուրդի սենյակ մտել է, թե ոչ, սակայն մինչ աճուրդի հասցե գնալը, հեռախոսազանգի միջոցով կապնվել է կառավարչի հետ, որին ի պատասխան կառավարիչը հայտնել է, որ աճուրդը չի կարող տեղի ունենալ, քանի որ սխալ հաշվեհամարին է վճարում կատարված եղել:Կապված ընկերության կողմից կատարված վճարումներին, ներկայացուցիչը հայտնեց, որ եղել են ընդհանուրը նույնիսկ երեք հաշվեհամարներ, որոնցից առաջին հաշվեհամարը եղել է ինչպես արդեն պարզվեց կառավարիչի պատասխանից՝ իր անձնական հաշվեհամարը, եղել է երկրորդ հաշվեհամարը և ներկայումս երրորդ հաշվեհամարը:Ընկերության կողմից վճարվել է երկրեդ հաշվեհամարին, սակայն գումարը ետ է նստել բանկի հաշվին, սկայն հիմքը, թե ինչպես է եղել որ ընկերությունը վճարել է երկրորդ անգամ այդ հաշվեհամարին և ինչ հիմքով՝ դիմումատուն չի կարող հիմնավորել, դրա համար իր բողոքի հիմքում ընդգծում է <u>միայն թվով երկու հաշիվները, որից մեկ հաշիվը կառավարիչի անձնական հաշիվն է իսկ երկրորդը արդեն հիմնական սնանկության հատուկ հաշիվը</u> և հանձնաժողովին ներկայացրեց ազդարարում տրված հայտարարությունները:

Այնուհետև Ա.Սարգսյանը հարցրեց, որ ըստ բանավոր հայտարարության, բողոք ներկայացրած անձի ներկայացուցիչը հայտնել է, որ առանձին հայց է ներկայացվել ՀՀ սնանկության դատարան, թե դա ինչ հայցադիմում է և ինչ պահանջով, որին ի պատասխան, բողոք ներկայացրած անձի ներկայացուցիչ՝ Ալբերտ Արզումանյանը հայտնեց, որ հայցադիմումի պահանջի հիմքում ընկած է ,,Շենոն Կո,, ՍՊԸ-ին 09.0.2025թ.-ին կայացած աճուրդում հաղթող ճանաչելու և կառավարչին առուվաճառքի պայմանագիր կնքելու պարտավորեցնելու մասին, որը ընդունվել է վարույթ:

Ա.Սարգսյանը քննարկելով նշված հայցադիմումին վերաբերվող հանգամանքները հանձնաժողովի անդամների հետ գտան, որ նշված հայցադիմումը և հետագայում այդ հայցադիմումի հիման վրա կայացվելիք դատական ակտը վերաբերելի չէ և չի կարող ազդել այս վարույթի ընթացքում կայացված որոշմանը:

Միաժամանակ դիմումատուի ներկայացուցիչը ներկայացրեց նաև վճարման անդորագրերի բնորինակները:

Այնուհետև հիմք ընդունելով այն հանգամանքը, որ կարգապահական հանձնաժողովի անդամները հարցեր չունեին ուղղելու ,,Շենոն Կո,, ՍՊԸ-ի ներկայացուցիչ՝ Ալբերտ Արզումանյանին, ինչպես նաև հաշվի առնելով այն փաստը, որ ,,Շենոն Կո,, ՍՊԸ-ի

ներկայացուցիչ՝ Ալբերտ Արզումանյանը նունպես լրացուցիչ հայտարարություններ չուներ, ուստի Ա.Սարգսյանը քվեարկության դրեց հարուցված վարույթը ավարտելու և հանձնաժողովին որոշման գնալու հարցը, որին հանձնաժողովի բոլոր անդամները քվեարկեցին կողմ:
Գարիկ Յավրումյանի նկատմամբ կարգապահական տուժ կիրառելու վերաբերյալ կարծիքներ հայտնելու ընթացքում, կարգապահական հանձնաժողովի անդամ՝ Հարություն Գևորգյանը հայտնեց, որ

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Կարգապահական հանձնաժողովը նախ արձանագրում է այն փաստը, որ հանձնաժողովը կարող է անդրադառնալ դիմումում նշված միայն այն հանգամանքներին, որոնք ապացուցվում են դիմում ներկայացնողի և կառավարչի կողմից ներկայացված փաստաթղթերով, դիմումներով և ապացույցներով: Հանձնաժողովը չի կարող անդրադառնալ այն հանգամանքներին, որոնք հիմված են միայն լոք հայտարարություններով և այդ հայտարարությունները կատարված են առանց համապատասխան հիմքերի: Նախ հարկ է նշել, որ երբ հանձնաժողովը անդրադառնում է կառավարչի կողմից կատարված սխալ գործողությունների դիտավորությանը, հանձնաժողովը կարող է անդրադառնալ միայն կառավարչի կողմից կատարված այն գործողություններին, որոնք կարող են ակնհայտ ցույց տալ այն փաստը, որ կոնկրետ դեպքում կառավարիչը, աճուրդի վերաբերյալ տրված հայտարարությունում, դիտավորյալ սխալ է նշել սնանկության հատուկ հաշիվը, որպեսզի ինչպես նշում է դիմումատուն, պարզելու համար, արդյո՞ք տվյալ աճուրդին այլ մասնակիցներ ևս կան, թե՝ ոչ:Կարգապահական հանձնաժողովը բնականաբար չի կարող անդրադառնալ այն հանգամանքներին, որ կարող է միգուցե լինել անձնական պայմանավորվածություններ կառավարչի և այլ անձանց միչև թե ոչ:Սակայն տրամաբանական վերլուծության ենթարկելով ներկայացված փաստաթղթերը ակնհայտ է դառնում, որ եթե սնանկության գործով կառավարիչը ցանկություն ունենար, կամ ունենար դիտավորություն հաշվեհամարի սխալ գերլով, ապա մինչ օրս այդ գույքերը չէին նույն արժեքով դրված լիներ աճուրդում:Ըստ առկա փաստաթղթերի և հենց դիմումատուի ներկայացուցչի կողմից Ա.Սարգսյանի հարցին տրված պատասխանով, հայտնի դարձավ, որ նշված գույքերը մինչ օրս գտնվում են աճուրդում և աճուրդի ընթացքում մինչ օրս արժեքները չեն իջեցվել:Ըստ էության կառավարիչը մեկ այլ շահագրգիռ գնորդի համար կարող է կատարել նման գործողություններ, երբ ցանկություն կունենա այդ գույքը վաճառել հենց այն անձին, ում նա ցանկություն ունի վաճառել և այդ վաճառքը իրականացնելու նպատակով, սխալ հաշվեհամար գրի և /կամ/ թույլ չտա հայտատուին ներկայանալու աճուրդին, ինչպես նշվում է սույն բողոք դիմումում:Կառավարչի շահագրգռվածությունը կարող է դիտարկվել նաև այն առումով, որ վերջինս իջեցնի աճուրդում տեղ գտած գույքերի արժեքները:Սակայն կոնկրետ դեպքում, կառավարիչը առանց կաշկանդվելու, հրավիրել է կրկնաճուրդներ, աճուրդների ընթացքում գույքի արժեքները չի իջեցրել և դեռ ավելին՝ դիմում ներկայացրած անձը, հաջորդ հրավիրված աճուրդին մասնակցել է աճուրդին, հաղթել է, սակայն գույքերը չի գնել:Դեռ ավելին՝ հաջորդող այլ աճուրդներին նույնպես, երբ աճուրդներին մասնակցել են այլ անձինք, այդ գույքերը նույնպես չեն վաճառվել և կառավարիչը աճուրդի է դրել այդ գույքերը առանց նվազեցրած արժեքների:Ըստ զուտ տրամանբանության տեսանկյունից ելնելով, հանձնաժողովը կոնկրետ գործողություններում դիմատվորություն և շահագոգռվածություն այլ անձի նկատմամբ չի տեսնում:

Հանձնաժողովը անդրադառնալով այն փաստական հանգամանքներին, որ կառավարիչը 09.01.2025թ.-ին աճուրդը չի անցկացրել հայտը նրան չհանձնելու պատճառով

գտնում է, որ ,,Սնանկության մասին,, ՀՀ օրենքի 76-րդ հոդվածի, ինչպես նաև պարտապանին պատկանող գույքը հրապարակային սակարկություններով վաճառելու մասին, 11.07.2023թ.-ի թիվ 385-Ն /փոփոխություն 03.08.20 N 300-Ն / կարգը նախատեսում է, որ Աճուրդին մասնակցելու ցանկություն ունեցող անձինք աճուրդի հայտարարությամբ սահմանված ժամկետում՝ բայց ոչ ուշ, քան աճուրդի անցկացման օրվանից հինգ օր առաջ, կարող են աճուրդի մասնակցության հայտ (այսուհետ՝ հայտ) ներկայացնել աճուրդի մասին հայտարարությունում նշված հասցեում գտնվող դատարանի գրասենյակ՝ հայտը գրասենյակի միջոցով կառավարչին փոխանցելու (տրամադրելու) համար:Ըստ կառավարիչի կողմից ներկայացված՝ դատարանի կողմից տրված պատասխան գրություններով, ակնհայտ է դառնում, որ դատարանի կողմից, ,,Շենոն Կո,, ՍՊԸ-ի կողմից դատարանին ներկայացված հայտը, վերջինիս չի հանձնվել, մասնավորապես՝ ՀՀ սնանկության դատարանի աշխատակազմի ղեկավարի պաշտոնակատար՝ Հ.Սաֆարյանի 09.04.2025թ.-ի թիվ Ե-21358/25 պատասխան գրությունով հայտնի է դարձել, որ իրականում ,,Շենոն Կո,, ՍՊԸ-ի կողմից 03.01.2025թ.-ին ներկայացված հայտի մասին, կառավարիչին թյուրիմացաբար չի տեղեկացվել:Դեռ ավելին՝ ինչպես հայտնի է կառավարիչը իր գործունեությունը իրականացնում է ք.Կապանում, իսկ հայտը ներկայացվել է ք.Երևան, Օտյան 53/2 հասցեում գտնվող՝ ՀՀ սնանկության դատարան և բնականաբար նշված հայտը ֆիզիկապես հնարավոր չէր տրամադրել կառավարչին:Հասկանալի է նաև այն փաստը, որ հայտ ներկայացրած անձին չի կարող հետաքրքրել նշված հանգամանքը, քանի որ վերջինս ըստ հայտարարության կատարում է վճարումը և օրենքով սահմանված կարգով ներկայացնում է հայտ դատարան: Սակայն մեկ այլ պայմաններում պետք է դիտարկել նաև այն հանգամանքը, որ կառավարիչի կողմից նշանակված աճուրդը և աճուրդին ներկայացված հայտերի առկայությունը պետք է հետաքրքրի հենց կառավարչին, որպես կոնկրետ այդ գործը ճիշտ, օպերատիվ և սեղմ ժամկետներում վարույթը իրականացնող անձ:

Համենայնդեպս կոնկրետ դեպքում, կառավարիչը իր կողմից ներկայացրած փաստաթղթերով ապացուցում է, որ ,,Շենոն Կո,, ՍՊԸ-ի կողմից դատարանին ներկայացված հայտը իրան չի հանձնվել և բնական է, որ կառավարիչը, որը ստանալով հայտը ի թիվս այլ պայմանների, պետք է ստուգեր նաև հայտի ճիշտ ձևակերպան և կազմման հանգամանքները, այդ հայտը չի ստացել:

Հանձնաժողովը անդրադառնալով կառավարչի կողմից հայտարարությունում նշված սխալ սնանկության հատուկ հաշվեհամարին, արձանագրում է, որ ,,Սնանկության մասին,, ՀՀ օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի ,,թ,, ենթակետը /նախորդ խմբագրությամբ, սնանկության գործը հարուցվել է 2015թ./ հիմնական կապիտալի մեծությամբ Հայաստանի Հանրապետությունում գործող առաջին հինգ առևտրային բանկերից մեկում պարտապանի անունով բացում է սնանկության հատուկ հաշիվ և դրան է հաշվեգրում պարտապանի անունով ստացվող բոլոր դրամական միջոցները:Իսկ ինչպես հայտնի դարձավ սույն վարույթի քննության ընթացքում, կառավարիչը 09.01.2025թ..-ին կայանալիք աճուրդի հայտարարությամբ նշել է իր անձնական հաշվեհամարը:Նշվածի մասին հայտարարել է ի դեպ նաև հենց կառավարիչը, նշելով, որ այդ հաշվեհամարը նշվել է ինչպես 09.01.2025թ., այնպես էլ դրա նախորդ աճուրդի հայտարարություններում, եւ սնանկության գործերով պրակտիկայում ինքը միակ կառավարիչը չէ, որ հայտարարության մեջ սնանկության կառավարչի՝ հաշվեհամարն են նշած լինում: Հանձնաժողովը արձանագրում է այն փաստը, որ օրենքի խախտումով կատարված գործողությունը չի կարող դառնալ կառավարիչների գործնական պրակտիկա:Հրապարակային սակարկությունների միջոցով ենթակա գույքերը վաճառելու նպատակով նշանակված աճուրդի հայտարարությունում, պետք է նշվեն միայն ՀՀ-ում գործող բանկերից մեկում բացված սնանկության հաշիվը:Նման պայմաններում հանձնաժողովը գտնում է, որ կառավարչի կողմից խախտվել են ,,Սնանկության մասին,, ՀՀ օրենքի 29-րդ հոդվածով սահմանված կանոնները:Իսկ ինչ վերաբերվում է կառավարիչի կողմից նշված այն

հանգամանքին, որ այնուամենայնիվ իր կողմից այդ խախտումը վերացվել է և հարուցված կարգապահական վարույթը ենթակա է կարճման, ապա հանձնաժողովը արձանագրում է այն փաստը, որ խախտումը վերացվել է արդեն իսկ այդ խախտումով կատարված գործողությունը ֆիքսելուց և դիմումատուի նկատմամբ այդ գործողությունը կատարելուց հետո, այն է՝ մինչև դիմումատուի իրավունքները խախտելը: Առավել ևս, որ հենց կառավարիչի կողմից է նշվում, որ աճուրդի հայտարարությունում նշված հաշվեհամարը նշվել է ինչպես 09.01.2025թ., այնպես էլ դրա նախորդ աճուրդի հայտարարություններում:

Նշված դեպքը էական նշանակություն ունի սնանկության վարույթների անցկացման համար զուտ այն հիմքով, որ օրենսդիրը տարանջատել է կառավարչի, կոնկրետ դեպքում քաղաքացու, կամ Ա/Ձ կառավարչի բանկային հաշվեհամարները, սնանկ ճանաչված անձանց հաշվեհամարներից:Օրենսդիրը նախատեսել է, որ ,,Սնանկության մասին,, ՀՀ Օրենքի 79-րդ հոդվածը սահմանում է, որ պարտապանի գույքի վաճառքից (օտարումից) ստացված սնանկության վարույթի շրջանակներում հավաքագրվող գումարները, մուտքագրվում են պարտապանի սնանկության հատուկ հաշվեհամարին, այլ ոչ թե կառավարիչի հաշվեհամարին: Նման պայմաններում ակնհայտ է դառնում, որ կառավարիչի կողմից խախտվել են ,,Սնանկության մասին,, ՀՀ օրենքի 29-րդ հոդվածի, ինչպես նաև **Սնանկության գործով կառավարչի վարքագծի Կանոնագրքի** 7.12 կետով սահմանված կանոնները:

Ինչ վերաբերվում է կառավարչի կողմից իր բացատրության մեջ նշված, կարգապահական վարույթ հարուցելու անհիմն լինելու, կամ հանձնաժողովի աշխատանքները ճիշտ կամ սխալ կազմակերպելու հանգամանքներին, ապա հանձնաժողովը այդ հարցերին չի անդրադառնում, անհիմն լինելու պատճառով:

Հանձնաժողովը արձանագրում է, որ կարգապահական հանձնաժողովը, ինքնակարգավորվող կազմակերպության կանոնադրությամբ, ինչպես նաև կանոններով կամ կարգերով սահմանված կարգով վերահսկում է անդամների գործունեության համապատասխանությունը սույն օրենքին, ինքնակարգավորվող կազմակերպության կանոնադրությանը, կանոններին, կարգերին, խախտում թույլ տված անձանց նկատմամբ կարգապահական վարույթ են հարուցում և համապատասխան տույժեր կիրառում:

Միաժամանակ հանձնաժողովը ուսումնասիրելով վարույթին տրամադրված նյութերը, ինչպես նաև բողոք ներկայացված անձի կողմից կատարված հայտարարությունը եկավ այն եզրակացության, որ ,,Սնանկության մասին,, ՀՀ օրենքի 27.2-րդ հոդվածով նախատեսված հիմքերով կառավարչի նկատմամբ պետք է կիրառել կարգապահական տույժ՝ նախազգուշացում.

Ա.Սարգսյան

Լ.Սարգսյան

Հ.Գևորգյան